# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. -ն ՀՀՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/16 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | ENIGMA SOI Ltd | ENIGMA | Վարչական հսկողություն OPTv3 | ENIGMA SOI Ltd | Մեկ կտորանոց հետքորսիչ. - Վերահսկման համակարգը բաղկացած է կառավարման համակարգից և Էլեկտրոնային շղթայից: - Վերահսկման կառավարման համակարգը կինտեգրի և/կամ կինտեգրվի ներկայումս Պրոբացիայի ծառայությունում ներդրված e-Convict ծրագրին (https://impel.pl/en,) - Էլեկտրոնային շղթայի հանելու, կոտրելու կամ այն անջատելու ցանկացած փորձ կամ այլ խախտումներ կատարելու դեպքում կուղարկի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | համապատասխան տվյալներ: - ապահովում է շահառուին ամրացված սարքավորումների հիման վրա շահառուի շարժի վերաբերյալ ցանկացած տվյալի օպերատիվ ստացում և պահպանում: - ցուցադրում է շահառուին ամրացված սարքավորումների կարգավիճակի, այդ թվում` մարտկոցի լիցքավորման կարգավիճակի, կապի և հաղորդակցության կորստի վերաբերյալ ազդանշանային տեղեկություններ: - յուրաքանչյուր շահառուին տրամադրվում է անհատական հաշիվ, որտեղ կարտացոլվի անձին ամրացված սարքավորումների ամբողջ աշխատանքը, այդ թվում` շղթայի հետ կապի կորուստը, շղթան բացելու կամ փակելու հանգամանքները, շահառուի կողմից կատարված խախտումները: - շահառուներին հնարավոր է առանձնացնել` ըստ տարածաշրջանի և պատասխանատու ծառայողների: - ունի հեռակա կարգով սարքավորումների |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կարգավորումները փոփոխելու, վերացնելու կամ լրացնելու հնարավորություն (զոնաների փոփոխություն, ժամանակահատվածի վերաձևակերպում, նոր պահանջների սահմանում): սարքերը հեռակա կարգով վերաթարմացման հնարավորություն: Հնարավոր է առանձնացնել կոնկրետ ժամանակահատված և դուրս բերել տվյալ ժամանակահատվածում շահառուների ողջ շարժը, սարքի աշխատանքը, ինչպես նաև դուրս բերել տարբեր ձևաչափերով հաշվետվություններ: - Ունենա հայաստանյան քարտեզ, որում հնարավոր կլինի հստակ նշել կոորդինատները և գտնել յուրաքնչյուր կոնկրետ հասցե: - Ապահովված է ծրագրի բոլոր միջերեսների հայալեզու լինելը: - Համակարգն օգտագործման համար մատչելի է (user-friendly): - առաջին փուլում կապահովվի մինչև 1000 շահառուի միաժամանակյա հսկողությունը՝ ունենալով շահառուների թվի հետագա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ընդլայնման (առնվազն 5000 շահառուի սպասարկման համար) հնարավորություն (վերազինման, այլ ոչ փոփոխման արդյունքում): - ունի հականերխուժային ծրագիր, որը կպաշտպանի համակարգը արտաքին միջամտություններից։ Հնարավոր է դուրս բերել հաշվետվություն այդ ներխուժման (նաև անհաջող) փորձերի վերաբերյալ: - ապահովված է կրկնորունակումով (redundancy): - լիցենզիայի ավարտից հետո կբացառվի կառավարման ծրագրային համակարգի որևէ ֆունկցիոնալի կորուստը: - ունի հնարավորություն աշխատելու ոչ միայն մատակարարի կողմից տրամադրված էլեկտրոնային հսկողության սարքավորումներով, այլ պետք է գնորդի պահանջով միացվի և ամբողջ ծավալով աշխատի նաև այլ արտադրողի սարքավորումների հետ: - կապահովվի ծրագրի սպասարկման հետ կապված վերապատրաստում: - սարքերը հանձնելու պահին կօգտագործվեն կամ ներբերված կլինեն Google-ի կամ Yandex-ի |

վերջին քարտեզները, որոնք 3 տարվա ընթացքում պարբերաբար կթարմացվեն մատակարարի կողմից։ Կադաստրի կոմիտեյի կողմից մշակվող հասցեների ռեգիստրի գործարկումից հետո գործընթացը կիրականացվի այդ քարտեզների հիման վրա։ - Մատակարարը պարտավորվում է ապահովել 3 տարի ժամկետով երաշխիքային սպասարկում. - Մատակարարը պարտավորվում է իրականացնել Պրոբացիայի ծառայության առնվազն 10 աշխատակիցների վերապատրաստում՝ համակարգը շահագործման հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահի դրությամբ։ - Էլեկտրոնային շղթան մասնակի կոշտ պատյանով է և ռետինե ժապավենով։ ռետինե ժապավենը՝ օպտիկական անվտանգության է։ - հիպոալերգեն է և հակահարվածային, համապատասխանում է IP68 ստանդարտին։ - ունի Եվրոպայի Միության ստանդարտով սերտիֆիկացում։ - աշխատանքային

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Enigma Systemy Ochrony Informacji Sp. z o.o. в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом <<ՊԾ-ԷԱՃԱՊՁԲ-24/16 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | թույլատրելի ջերմաստիճանը առնվազն -15°C-ից +55°C-ի միջակայքում է: - էլեկտրոնային շղթան ունի անձի վերջույթներին ամրացնելու չափի կարգավորում՝ ֆիքսված տարբեր չափերի: - քաշը՝ 130 գրամ է: - մարտկոցի ամբողջական լիցքով աշխատանքի տևողությունը՝ առնվազն 24 ժամ: - էլեկտրոնային շղթան ունի «2 GSM ցանցի միանալու հնարավորություն, օժտված է «GSM, 4G»-ի հնարավորությամբ, ունի նաև 3G-ով աշխատելու հնարավորություն, ունի արբանյակային տեղորոշման համակարգի օգտագործման հնարավորություն /Գլոբալ նավիգացիոն արբանյակային համակարգ (GPS/GNSS)/, - օգտագործում է սենսորային տվիչներ կառավարման համակարգում էլեկտրոնային շղթայի մասին ընթացիկ տվյալներ ստանալու նպատակով (պատյանի կամ շղթայի բացման, վնասման, սահմանված տարածքը լքելու, մարտկոցի թույլատրելի նվազագույն լիցքաթափման կամ կապի կորստի դեպքում համապատասխան |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տվյալներ ստանալու համար)։ - ունի էլեկտրոնային շղթայի մարտկոցի լիցքի և խախտումների վերաբերյալ նախազգուշացնող ազդանշաններ ազդարարելու համար՝ լուսային, ձայնային և թրթռացող (վիբրացիոն) ցուցիչներ։ - ունի տվյալների փոխանցման ժամանակահատված՝ կարգավորվող, առնվազն յուրաքանչյուր 30 վայրկյանը մեկ։ - կապի և հոսանքի խափանման դեպքում բոլոր տվյալները առնվազն 48 ժամ պահպանվում են հիշողության մեջ և ուղարկվում կառավարման կենտրոն՝ կապը վերականգնվելուն պես։ - ունի կառավարման համակարգին իրական ժամանակում տեղորոշման վերաբերյալ տեղակտվություն հաղորդելու, ինչպես նաև տարածքների սահմանման և դրանցում գտնվելու ժամանակագրության հաշվետվությունների, իսկ խախտումների դեպքում՝ համապատասխան ազդանշանների փոխանցման հնարավորություն։ - SIM քարտերը ձեռք են բերվում գնորդի կողմից և տրամադրվում են |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մատակարարին գնման համաձայնագիրը կնքելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում: - Մատակարարը պարտավորվում է ապահովել էլեկտրոնային շխթայի և դրա ծրագրի 3 տարի ժամկետով երաշխիքային սպասարկում - Էլեկտրոնային շղթան տեղադրելու, շղթան բացելու կամ փակելու համար պետք է առաջին խմբաքանակի ձեռքբերման ժամանակ կտրամադրվեն 11 միավոր (համալիր) համապատասխան ծառայողական գործիքներ: - Ձեռքբերվող յուրաքանչյուր էլեկտրոնային հսկողության շղթայի համար լրացուցիչ (բացի հիմնական (լարով) սնուցող սարքից) տրամադրվում է ևս մեկ հատ շարժական սնուցման սարք, որը կարող է նախապես լիցքավորվել հոսանքի աղբյուրից և ամրանալով Էլեկտրոնային շղթայի վրա՝ լիցքավորել այն: - Շարժական սնուցման սարքը հակահարվածային է: - էլեկտրոնային շղթան ամբողջությամբ լիցքավորվում է ոչ ավել քան 90 րոպեում: վերահսկման սարքը տեղադրելու, շղթան բացելու |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կամ փակելու համար պետք է առաջին խմբաքանակի ձեռքբերման ժամանակ կտրամադրվի 11 (համալիր) համապատասխան ծառայողական գործիքներ: Կտրամադրվի Ռետինե ժապավենով էլեկտրոնային շղթայի ամրակապ՝ պահանջվող խմբաքանակի վեցապատիկի չափով՝ ժապավենի չափսերը նախապես համաձայնեցնելով Գնորդի հետ: |